



Երկրաշարժ Վրաստանում

2009թ. սեպտեմբերի 8-ին, տեղական ժամանակով 03:41-ին Սեյսմիկ Պաշտպանության Ազգային Ծառայության սեյսմոլոգիական ցանցի կողմից գրանցվել է 5.9 մագնիտուդով երկրաշարժ, որի էպիկենտրոնը գտնվում է Վրաստանի տարածքում՝ Քութայսի քաղաքից 73 կմ դեպի հյուսիս-արևելք: Երկրաշարժի հիպոկենտրոնը գտնվում է 10 կմ խորության վրա, ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 7-8 բալ: Տեղական ժամանակով 03:49-ին երկրաշարժին հետևել է 6 բալ ուժգնությամբ հետցնցում:



Երկրաշարժը զգացվել է ամբողջ տարածաշրջանում, այդ տվում ՀՀ տարածքի մի շարք բնակավայրերում, մասնավորապես՝ Գյումրիում, Վանաձորում, Ստեփանավանում, Նոյեմբերյանում և Տաշիրում 3-4 բալ ուժգնությամբ:



Երկրաշարժի էպիկենտրոնային գոտին գտնվում է Մեծ Կովկասի լեռնաշղթայի հարավային լանջին: Հիմնական վնասները կրել է Վրաստանի Օնիի շրջանն իր գյուղերով: Էպիկենտրոնային գոտում վնասվել է մոտ 750 տուն, որից 330 վերականգնելու ենթակա չէ, ընդհանուր առմամբ երկրաշարժից սուծել է մոտավորապես 1000 ընտանիք, բարեբախտաբար զոհեր չկան:



Այդ տարածքում վերջին ուժեղ երկրաշարժը տեղի է ունեցել 1991թ. ապրիլի 29-ին, որն ունեցել է 6.9 մագնիտուդ, ինչի հետևանքով մոտավորապես 200 մարդ զոհվել էր, 1000-ը՝ վիրավորվել, 300 ընտանիք մնացել էր անօթևան:

Երկրաշարժից մոտավորապես 15 րոպե անց Սեյսմիկ Պաշտպանության Ազգային Ծառայության օպերատիվ հերթափոխի հետ կապ էին հաստատել

Վրաստանի արտակարգ իրավիճակների տարածքային ստորաբաժանումից, որոնց մանրամասն տեղեկատվություն է տրամադրվել հիմնական ցնցումի և այդ պահին տեղի ունեցած երկու հետցնցումների հիմնական պարամետրերի վերաբերյալ: Առավոտյան ՍՊԱԾ-ի ղեկավարությունը նույնպես կապ էր հաստատել վրաց գործընկերների հետ, որոնց հայտնել էր մեր պատրաստակամությունը հարևան երկրին մասնագիտական օգնություն տրամադրելու համար:

Երկրաշարժին պարբերաբար հաջորդում են բազմաթիվ հետցնցումներ, այս ժամանակահատվածի ընթացքում գրանցվել է 3 և ավելի մագնիտուդով մոտավորապես 20 հետցնցում, որոնք կշարունակվեն առնվազն մեկ ամիս:



ՏՎ վարչության պետ Միքայել Ենանով
ՍՊԱԾ գործակալություն